ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ

ք. Եղեգնաձոր **17/12/2021**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 10
ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 20 անդամներ:

Բացակա էր՝ Սոնա Մարգարյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝ Վայոց ձորի մարզպետ Արարատ Գրիգորյանը, **Վայոց ձորի մարզպետի խորհրդականի ժ/պ** Արմեն Դավթյանը, **Տեղական ինքնակառավարման եվ հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության** պետ Աղվան Հարությունյանը:

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Դավիթ Հարությունյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Անժելա Սարգսյանը

Վարդան Ավագյանը հրապարակեց թիվ 36 տարածքային ընտրական հանձնաժողովի թիվ 43-Ա որոշումը՝ ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնքի ավագանու 2021թվականի դեկտեմբերի 5-ի ընտրությունների արդյունքներով Եղեգնաձոր համայնքի ավագանի ընտրվելու մասին և Տարածքային ընտրական հանձնաժողովի 2021 թվականի դեկտեմբերի 16-ի «Եղեգնաձոր համայնքի 16 դեկտեմբերի 2021 թվականի N 1 արձանագրությունը:

Բացման խոսքով հանդես եկավ մարզպետ Արարատ Գրիգորյանը, շնորհավորեց համայնքի ղեկավարին ընտրվելու կապակցությամբ, շնորհակալություն հայտնեց բոլորին մարզը առանց ցնցումների ընտրություններին մասնակցելու համար:

Եղեգնաձոր համայնքի նորընտիր ղեկավար Դավիթ Հարությունյանը շնորհակալություն հայտնեց ներկաներին և հորդորեց հետագա աշխատանքներն իրականացնել ի շահ և բարօրություն համայնքի և բնակիչների:

,,Քաղաքացիական պայմանագիր,, կուսակցության անդամ Մուշեղ Ներսիսյանը առաջարկեց քննարկել ավագանու խմբակցություններ ստեղծելու հարցը, որը ներառվեց օրակարգի նախագծի մեջ:

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ՝

ՀԱՄԱՄԱՍՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՐԳՈՎ ԸՆՏՐՎԱԾ ՆՈՐԸՆՏԻՐ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՌԱՋԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջներով.

1. Հաստատել 2021 թվականի դեկտեմբերի 17-ի Եղեգնաձոր համայնքի՝ համամասնական ընտրակարգով ընտրված նորընտիր ավագանու առաջին նստաշրջանի առաջին նիստի օրակարգը.

1) ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԻ ՍՏԱՆՁՆՄԱՆ ԵՐԴՄԱՆ ՏԵՔՍՏՆ Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՆՍՏԱՎԱՅՐԵՐԻ ՄԱՍԻՆ

3) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՌԱՋԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ

4) ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏԵՂԾՈՒՄ Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Լսեցին

ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԻ ՍՏԱՆՁՆՄԱՆ ԵՐԴՄԱՆ ՏԵՔՍՏՆ Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով և 74-րդ հոդվածով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության թիվ 36 տարածքային ընտրական հանձնաժողովի 2021 թվականի դեկտեմբերի 12-ի թիվ 43-Ա որոշումը

1. Ի գիտություն ընդունել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնքի ղեկավարի պաշտոնի ստանձման երդման հետևյալ տեքստը՝

«Ստանձնելով Եղեգնաձոր համայնքի ղեկավարի պաշտոնը՝ երդվում եմ.

Համայնքի ղեկավարի լիազորություններն իրականացնելիս պահպանել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, օրենքները, համայնքի ավագանու որոշումները, ազնվորեն և բարեխղճորեն կատարել համայնքի ղեկավարի լիազորությունները, ծառայել համայնքի բարգավաճմանը, գործել ի բարօրություն նրա բնակիչների: Պարտավորվում եմ պաշտպանել համայնքի իրավունքները, օրինական շահերը և սեփականությունը, ուժերիս անմնացորդ նվիրումով սատարել ժողովրդի հավատին, նպաստել նրա նյութական և հոգևոր վերելքին»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՆՇՏԱՎԱՅՐԵՐԻ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4.4-րդ կետով՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների՝ համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի, և Եղեգնաձոր համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի վարչական ղեկավարների նստավայրերը՝ համաձայն աղյուսակի՝

Համայնքի ավագանի	քաղաք Եղեգնաձոր, Շահումյան փողոց N 1
Համայնքի ղեկավար	քաղաք Եղեգնաձոր, Շահումյան փողոց N 1
Գլաձոր գյուղի վարչական ղեկավար	գյուղ Գլաձոր, 33 շենք
Մալիշկա գյուղի վարչական ղեկավար	գյուղ Մալիշկա, 1փողոց 1
Վերնաշեն գյուղի վարչական ղեկավար	գյուղ Վերնաշեն, Թանահատի 56ա
Գետափ գյուղի վարչական ղեկավար	գյուղ Գետափ, 19 փողոց 1ա

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՌԱՋԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասով՝

1. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնքի ավագանու առաջին նստաշրջանի հերթական նիստի գումարման օր և ժամ որոշել 2022 թվականի փետրվարի 9–ին, ժամը՝ 18:00–ին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Լսեցին
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏԵՂԾՈՒՄ Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 66-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության թիվ 36 տարածքային ընտրական հանձնաժողովի 2021 թվականի դեկտեմբերի 12-ի թիվ 43-Ա որոշումը.

1. Ընդունել ի գիտություն Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնքի ավագանու կողմից համանուն խմբակցությունների ստեղծումը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Ավագանու անդամներ

ՎԱՐԴԱՆ ԱՎԱԳՅԱՆ

ԱՍՏՂԻԿ ԲԱԲԱՅԱՆ

ԱՐՇԱՎԻՐ ԲԱՅԱԹՅԱՆ

ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԾՈՎԻՆԱՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՆԵԿՏԱՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԿԱՐԵՆ ՄԱՆԱՍԵՐՅԱՆ

ԹԱՄԱՐԱ ՄԿՐՏՉՅԱՆ

ԴԱՎԻԹ ՄՈՎՍԻՍՅԱՆ

ԵՂԻՇԵ ՆԱՋԱՐՅԱՆ

ՄՈՒՇԵՂ ՆԵՐՍԻՍՅԱՆ

ՄԱՐԱՏ ՇԱՀԲԱՋՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ՈՍԿԱՆՅԱՆ

ԳՐԻԳՈՐ ՍԱՐԳՍՅԱՆ

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ

ԾՈՎԻՆԱՐ ՍԱՐԳՍՅԱՆ

ՆԱՐԵ ՍԵՆԻՔԵՐԻՄՅԱՆ

ԱՐՄԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՌՈՄԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՎԱՀԵ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ _____

Նիստն արձանագրեց՝ Անժելա Սարգսյանը _____